

Հ. Խ. Ս. Հ.

Ողբերգի ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՏՐՈՆ

ՍԵՎԻԼՅԱՆ ՍԱՓՐԻՉ

Ողբերգի ՅԵՐԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆԲ

ԼԻԲՐԱՐՍՏՈՒ

ՅԵՎ

ԾՐԱԳԻՐ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1936

05 FEB 2018

Հ. Խ. Ս. Հ.

ՈՊԵՐԱՅԻ ՅԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՏՐՈՆ

ՍԵՎԻԼՅԱՆ ՍԱՓՐԻԶ

ԿՈՄԻԿԱԿԱՆ ՈՊԵՐԱ ՅԵՐԵԲ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ
ԶՈՐՍ ՊԱՏԿԵՐՈՎ

ՅԵՐԱԺՆՈՒՔՅՈՒՆ՝ ՀԻԱԿՈՄՈ ՌՈՍԻՆՈՒ
ԸՍՏ՝ ԲՈՒՄԱՐՇԵՅԻ

ՅԵՐԵՎԱՆ

1986



1-38042



ՌՈՍՍԻՆԻ 1792—1868

Ռ Ո Ս Ի Ն Ի

(1792—1868)

Ռոսիցիս համարվում է իտալական ազգային յերաժշտության ականավոր ներկայացուցիչներից մեկը:

Նա ծնվել է 1792 թվի Փետրվարի 29-ին, Պեդառոյում, վախճանվել է 1868 թվի նոյեմբերի 13-ին Պարիզի մոտ՝ Ռուելլում: Նրա աղքատ ծնողները յերաժիշտներ էյին. մայրը յերգչուհի յեր, հայրը փողային ինստրումենտներ պատրաստող և նվագող: Ռոսինու մանկությունն անցավ յերաժշտական միջավայրում: Ռոսինին վաղ հասակից սկսեց յերաժշտական դասեր վերցնել: 14 տարեկան հասակում գրեց իր առաջին ոպերան (մեկ գործողությամբ), վորն առաջին անգամ բեմադրվեց 1810 թվին՝ Վենետիկում:

1829 թվին Ռոսինին գրեց իր վերջին աշխատությունը՝ «Վելլահեմ Տելլ» ոոման-

տիկական ուղերան՝ չորս գործողությամբ։ Այդ թվից մինչև իր մահը՝ 1868 թվիւր, այսինքն 39 տարի շարունակ, նա վոչ մի ուղերա չդրեց, այնինչ մինչև 39 տարեկան հասակը, նա գրել էր արդեն 38 ուղերա։

1813 թվին արդեն Ռոսինին համարվում էր Իտալիայի խոշորագույն կոմպոզիտորը։ Նրա ուղերաները մի ժամանակ սկսեցին տարածվել վոդջ Յեվրոպայում։

Կոմիքական ուղերանների ծաղկման և աճման ամենայեռուն շրջանը համարվում է 18-րդ դարը։ Այս շրջանում առանձնապես աչքի յեն ընկնում իտալական կոմիքական ուղերաներն իրենց որիզինալությամբ և կառուցվածքով։ Այդ ուղերաները ամենից առաջ ուղղված էյին մեռնող, արդեն քայքայվող, պատմության թատերաբեմից հեռացող ազնվական դասակարգի դեմ։

Այդ շրջանի յերաժշտական ստեղծագործություններն իրենց բովանդակությամբ և արվեստի նոր ձևով դրսևորում են բուրժուազիայի իղձերն ու մտորումները։

Ուղերային արվեստը, իբրև մեծ ֆորմաների գործ, այդ շրջանում լավագույն արձագանքը հանդիսացավ նույն այդ բուրժուազիայի համար։

Յեվ ահա Ռոսինին, վորը ծնվեց 18-րդ դարի վերջին (1792 թվին) և ստեղծագործեց 19-րդ դարի առաջին քառորդին, իր ստեղծագործություններով դարձավ բուրժուազիայի գաղափարախոսը յերաժշտական կուլտուրայի մարդում։ Առանձնապես Ռոսինու «Սևիլյան սափրիչ» ուղերան հանդիսացավ այդ նոր արեստի կուլմինացիոն կետը։

«ՍԵՎԻԼՅԱՆ ՍԱՓՐԻԶ»

Կոմիքական ոպերա յերեք գործողության
թյամբ և չորս պատկերով:

(Առաջին ներկայացումը 1816 թ. փետրվարի 5-ին)

«Սևիլյան սափրիչ» ոպերան, վորը մինչև այսօր ել համարվում է Ռոսինու լավագույն կոմիքական ոպերան, գրված է 13 օրում:

«Սևիլյան սափրիչ» ոպերայի տեքստը պատկանում է Փրանսիայի ականավոր գրող Բումարշեյին, վորը նույնպես հանդիսանում էր բուրժուազիայի գաղափարախոսը գրականության ասպարիզում: Այս կոմեդիան մեծ նշանակություն ունի այն ժամանակվա գրական և քաղաքական կյանքի համար:

Առաջին անգամ այս կոմեդիայում համարձակ կերպով խոսեց խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչ Ֆիգարոն: Ֆիգարոն և կոմս

Ալմավիվան սոցիալական տարբեր, ներհակ դասերի ներկայացուցիչներ են: Առաջինը խելոք, հնարագետ, ճարպիկ, խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչ, յերկրորդը վոդոմեկի, խելքից զուրկ և թեթևաբարո արիստոկրատիայի ներկայացուցիչ:

«Սևիլյան Սափրիչ» կոմեդիան առաջին անգամ բեմադրվեց 1775 թ. Պարիզում: Կոմեդիան լիբրետտոյի յե վերածել Ստերնին: «Սևիլյան Սափրիչի» առաջին յերաժշտությունը գրել է իտալացի կոմպոզիտոր Բանելլոն, զեռեա 1783 թվին:

«Սևիլյան Սափրիչը», ներկայացնում է Բումարշեյի տրիլոգիայի առաջին մասը, յերկրորդ մասը՝ «Ֆիգարոյի հարսանիքն» է, իսկ յերրորդ՝ «Հանցավոր մայրը»: Այս յերեք մասերը շաղկապված են միմեանց հետ, իրենց կենտրոնն ունենալով Ֆիգարոն իբրև գլխավոր ֆիգուրա:

«Սևիլյան Սափրիչ» ոպերայի նախերգանքը (E-dur) նույն կոմպոզիտորի «Ելիզաբեթ» կոմիքական ոպերայի նախերգանքն է (գրված է 1815 թվին), վորը հետագա-

յում միացված ե «Սեիլյան Սափրիչ» ոպե-
րային:

«Սեիլյան Սափրիչ»-ում հեղինակի առաջ
խնդիր ե դրված մարդկային ձայնի ոգտա-
գործումը մաքսիմալ չափով: Յեւ պետք ե
ասել, վոր մարդկային ձայնի լրիվ ոգտա-
գործումը հանդիսացել ե խտալացի կոմպո-
զիտորների հիմնական նպատակներից
մեկը: Այսպիսի մի կարևորագույն խնդիր
իր ոպերաներում ե հատկապես «Սեիլյան
Սափրիչ»-ում լուծել ե Ռոսինին:

Յերաժշտական յերկը, մեծ թե փոքր
ֆորմայի, պետք ե հիմնվի ու կառուցվի
մեխոդիայի, մեխոսի վրա, ահա թե ինչ
նպատակ ե առաջադրել իրեն Ռոսինին: Այս
նպատակին նա հասել ե խոշոր չափերով:
Այդ ե ցույց տալիս վերոհիշյալ ոպերան:

Արիաներով ե ռեչիտատիվներով հարուստ
կոմիքական այս ոպերան իր բնույթով
լիրիքական արվեստի մի նմուշ ե ոպերա-
յին կուլտուրայի բնագավառում:

Գ Ո Ր Ծ Ո Ղ, Ա Ն Ձ Ե Ր

ԿՈՄՍ ԱԼՄԱՎԻՎԱ—Տեղում

ԲԱՐՏՈԼՈ—դոկտոր քժկուքյան Ռոգիմայի խնամա-

կայը—բաս կամ բարիտոն.

ՌՈԶԻՆԱ—Բարտոլոյի վորդեգրուհի — սոպրանո

ՖԻԳԱՐՈ—ափքիչ — բարիտոն

ԴՈՆ ԲԱԶԻԼԻՈ—Ռոգիմայի յերաժշտության ուսու-

ցիչ — բաս

ՖԻՈՌԵՆԼԼՈ—Ալմավիայի ծառա — բարիտոն

ԲԵՐՏԱ—Բարտոլոյի սպասուհին

ՈՅԻՅԵՐ—Ալկատ — (Մուսիցիբալ չինովնիկ)

ՆՈՏԱՐՅՈՒՍ

Զինվորներ. յերաժիշտներ

Գործողության վայրը Սեվիլյա (Իսպանիա), գործո-
ղության ժամանակ 18-րդ դարի վերջում:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սեկւյան քաղաքի հրապարակը:

Կոմս Ալմավիվայի հրամանով թափառական յերաժիշտները նվագում են դոկտոր Բարտոլոյի վորդեգրած աղջկա Ռոզինայի պատուհանի տակ: Կոմսը յերաժիշտների նվագի ընկերակցությամբ յերգում է սերենադա: Լսվում է Ֆիգարոյի ձայնը, նա յերգում է իր նշանավոր կավատինան: Կոմս Ալմավիվան Ֆիգարոյին հայտնում է, վոր ինքը սիրահարված է Ռոզինայի վրա և խնդրում է ոգնել իրեն Բարտոլոյի վորդեգրուհուն տեսնելու համար: Ֆիգարոյի խորհուրդով Կոմս Ալմավիվան Ռոզինայի պատուհանի տակ յերգում է կանցոնետ, ուր նա իրեն լինտոր է անվանում: Ռոզինան նայում է պատուհանից և յերգում: Բարտոլոն վճռել է, առանց ժամանակ կորցնելու ամուսնանալ իր վորդեգրած աղջկա Ռոզինայի հետ: Ի վերջո Ֆիգարոն Կոմսին

խորհուրդ է տալիս հագնել զինվորի շորեր. ձեռնալ հարբած և մտնել Բարտոլոյի բնակարանը՝ գիշերելու տեղ փնտռելու մտադրությամբ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Դոկտոր Բարտոլոյի բնակարանում Ռոզինան յերգում է իր սերը: Նա Լինդորի համար նամակ է պատրաստել, սպասելով Ֆիգարոյին: Գալիս է Ֆիգարոն. հետո Բարտոլոն: Յերևում է Ռոզինայի յերաժշտության ուսուցիչ Դոն Բազիլին: Նա Բարտոլոյին հայտնում է, վոր Կոմս Ալմավիվան սիրահարված է Ռոզինայի վրա: Այս խոսակցությունը լսում է Ֆիգարոն և հայտնում Ռոզինային:

Կոմս Ալմավիվան «հարբած», զինվորականի շորերով դոկտոր Բարտոլոյի բնակարանն է մտնում: Ռոզինան իսկույն հասկանում է, վոր ներս մտնողը Լինդորն է: Բարտոլոն աշխատում է «հարբած» զինվորին դուրս անել բնակարանից, սակայն իգուր: Ալմավիվան կարողանում է Ռոզին-

նային հանձնել իր նամակը: «Հարբած»
գինվորը սուրը քաշած շարունակում ե
հարձակվել Բարտոլոյի և տնեցիների վրա:
Այժմուկ ե բարձրանում: Ներս են մտնում
վոստիկանները: Վոստիկանապետը պահան-
ջում ե ձերբակալել Լինդորին, սակայն
վերջինս ցույց ե տալիս իր ինքնուրույնու-
թյունն ապացուցող մի փաստաթուղթ,
վորից հետո վոստիկանապետը հրաժարվում
ե իր մտադրությունից:

ՅԵՐԵՐՈՒԿ ԳՈՐՆ ՈՂՈՒԹՅՈՒՆ

Բարտոլոյի Բնակարանն ե մտնում Կոմս
Ալմավիվան. Նա Բարտոլոյին հատնում ե,
վոր Դոն Բազիլիոն հիվանդ ե և վոր ինքը
յեկել ե նրան փոխարինելու. իբրև Բազիլ-
իոյի աջակերտի: Դասի ժամանակ Ռոզինան
և Կոմսը բացատրվում են: Գալիս ե Ֆիգա-
րոն, ներս ե մտնում նաև Բազիլիոն: Նրանք
բոլորը միասին Դոն Բազիլիոյին հիվանդ
համարելով կարողանում են բնակարանից
դուրս հանել: Ֆիգարոն սկսում ե Բարտո-
լոյին սափրել, իսկ այդ միջոցին Կոմսը

Ռոզինային հայտնում ե, վոր նույն գի-
շերը փախչելու յեն. Բարտոլոն խելքի յե
ընկնում, հասկանում: Նա հարձակվում ե
Կոմսի և Ֆիգարոյի վրա ու նրանց բնա-
կարանից դուրս հանում:

Հետևյալ պատկերում, Բարտոլոն իր վոր-
դեզրուհուն հայտնում ե, վոր Կոմսին գրած
իր նամակը գտնվում ե նրա սիրուհիներից
մեկի մոտ: Սաստիկ զայրանալով, Ռոզի-
նան, Բարտոլոյին առաջարկում ե ամուս-
նանալ իր հետ. Հենց վոր Բարտոլոն բնա-
կարանից հեռանում ե, ներս են մտնում
Կոմսը և Ֆիգարոն: Ռոզինայի և Կոմսի
միջև ծագած կարճ վեճից հետո, խնդրը
պարզվում ե: Նրանք վորոշում են փախչել,
սակայն այդ բապեյին ներս ե մտնում
Բազիլիոն նոտարի հետ՝ Բարտոլոյին ա-
մուսնացնելու մտադրությամբ: Ռոզինան
և Ալմավիվան ամուսնանում են: Գալիս ե
Բարտոլոն արդեն կանգնած կատարված
փաստի առաջ:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՌՈՍՍԻՆԻ

ՍԵՎԻԼՅԱՆ ՍԱՓՐԻՉ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

(Այբուբենական կարգով)

Ռոզինա	{ Գասպարեկի Ա. Դանիելյան Հ. (վաստ. արտ.)
Բերտա	{ Անահյան Ա. Մկրչյան Ս.
Ալմավիվա	{ Կարաճով Ա. (վաստ. արտ.) Սահրաջյան Ն.
Ֆիգարո	{ Նորա Տալյան (վաստ. արտ.) Սերգորով Ն.
Բազիլիո	{ Գաբաշվիլի Մ. Իսեցկի Լ. (վաստ. արտ.) Մարգարին Մ.
Բարտոլո	Գրիգորեկ Ս.

Ֆիգարելլո	{ Անդրեկ Ի. Կարժինյան Ս.
Ապա	{ Ալեքսեյ Վ. Բաղդասարյան Գ.

Ընթացողություն

վաստ. ռեժ. . . Ա. ԲՈՒՐՋԱԼՅԱՆԻ (վաստ. արտ.)

Արտ. ձեռագիր. Մ. ՅԻՆՈՋՅԱՆԻ (վաստ. նկ.)

Բաղադրություն. . . Վ. Պրեսնյակով

Խորհրդատի. . . Վ. Նիկոլայի
Երկ. վարում Ե Գ. Վոսկանյանը

Բեմի ժաշկահար և հուսյն. արհեստ. վար. Ղա-
ղարյան Խ., Դերձ, արհեստ. վար. Ամբրյան Ա.,
Բողոտաֆոր՝ աֆալյան Մ., Ռեկվիզիտ՝ Վոպյան
Հ., Վարսավիրա՝ Մաճկալյան Ա.,

Գլավիտի № 1119, պատվեր № 687, տիբաժ 1200

Գյուղերաբուժական, Նալբանդյան 11, Ֆերեհան

ՀՀ Ազգային գրադարան



NL0977693

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

20 ՀՈՒՆ. 1936

1

3804